Հավելված
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահի
2017 թվականի նոյեմբերի 16-ի
թիվ ՆՈ-08-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՄՐՑՈՒՅԹ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և պետական ծառայողի ատեստավորում անցկացնելու համար թեստերը կազմվում են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք) և սույն կարգին համապատասխան:

2. Մրցույթի մասնակիցների կամ պետական ծառայողների գիտելիքներն Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված բնագավառներում ստուգելու համար կազմված հարցաշարը (այսուհետ՝ Հարցաշար) բաղկացած է հարցերից (խնդիրներից): Հարցերը վերաբերում են համապատասխան բնագավառների կոնկրետ հարցադրումներին, իսկ խնդիրները՝ կոնկրետ իրավիճակների նկարագրությանը:

3. Պետական ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար նախատեսված յուրաքանչյուր բնագավառի հարցաշարում ընդգրկված հարցերի (խնդիրների) քանակը պետք է պակաս չլինի թեստային առաջադրանքում տվյալ բնագավառի համար նախատեսված հարցերի քանակի եռապատիկից:

4. Հարցաշարը, դրանում ընդգրկված կոդավորված, համարակալված հարցերը (խնդիրները) և դրանց ճիշտ պատասխանները կազմում է Աշխատակազմը:

5. Հարցերը (խնդիրները) կոդավորվում, համարակալվում են՝ ըստ բնագավառների և ըստ պաշտոնների խմբերի:

6. Աշխատակազմը հատուկ առանձնացված համակարգչում զետեղում է Հարցաշարը, դրանում ընդգրկված կոդավորված, համարակալված հարցերը

(խնդիրները) և յուրաքանչյուր հարցի (խնդրի) երեք կամ չորս ենթադրյալ պատասխանները, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

7. Մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ Աշխատակազմը հրապարակում է Հարցաշարը: Հարցաշարում ընդգրկված հարցերի (խնդիրների) ճիշտ պատասխանները հրապարակման ենթակա չեն:

8. Թեստերը կազմվում են համակարգչային ծրագրի միջոցով համակարգչում նախօրոք զետեղված Հարցաշարի կոդավորված հարցերից (խնդիրներից)՝ պատահական ընտրությամբ: Համակարգչային ծրագիրը, ընտրելով հարցը (խնդիրը), միաժամանակ դուրս է բերում վերջինիս ենթադրյալ պատասխաններն ու միասնականացնում:

9. Թեստերը կազմում են մրցութային կամ ատեստավորման հանձնաժողովները՝ մրցույթի մասնակիցների կամ պետական ծառայողների գիտելիքներն Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված բնագավառներում ստուգելու համար:

10. Մրցութային կամ ատեստավորման հանձնաժողովները թեստերը կազմում են մինչև թեստավորման փուլ սկսելը:

11. Յուրաքանչյուր մրցույթի դեպքում մասնակիցների համար կազմվում է մեկ ընդհանուր թեստ՝ սույն կարգին և թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

12. Թեստավորման առաջադրանքները մրցույթի մասնակցին կամ պետական ծառայողին կարող են առաջարկվել գրավոր կամ համակարգչի միջոցով:

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար **Ա. Սաղաթելյան**